# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

## 2019 թվականի հուլիսի 10-ից 12-ը Ռուսաստանի Դաշնություն (ք.Մոսկվա) գործուղման արդյունքների մասին

**1. Անունը, ազգանունը՝**

Դավիթ Անանյան

Միքայել Փաշայան

**2. Զբաղեցրած պաշտոնը՝**

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահ

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալ

**3. Գործուղման վայրը և ժամկետները՝**

Ռուսաստանի Դաշնություն, ք.Մոսկվա, հուլիսի 10-ից 12-ը

**4. Հրավիրող կողմը՝**

Ռուսաստանի հարկային ծառայություն

**5. Գործուղման նպատակը (աշխատանքային որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)**

Այցի նպատակն էր ուրվագծել ՀՀ ՊԵԿ-ի և ՌԴ հարկային ծառայության միջև համագործակցության խորացման հեռանկարը և ի հայտ բերել այն հարցերը, որոնց ուղղությամբ անհրաժեշտ է իրականացնել կազմակերպված աշխատանք ԱՊՀ և ԵԱՏՄ-ի առջև ծառացած հարկային վարչարարության համար կիրառվող տեխնոլագիական լուծումներ պահանջող խնդիրներն արդյունավետ կերպով լուծելու համար:

**6. Քննարկված թեմաները**

Ուսումնասիրվել են ՌԴ հարկային մարմնի կողմից հարկային վարչարարության համար կիրառվող տեխնոլագիական լուծումները և քննարկվել են այդ ոլորտում կողմերի միջև փորձի փոխանակման կազմակերպման հնարավորությունները:

**7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝**

ՀՀ ՊԵԿ նախագահը և նախագահի տեղակալը աշխատանքային հանդիպում են ունեցել Ռուսաստանի հարկային ծառայության ղեկավարի՝ Միխայիլ Միշուստինի հետ:

Այցի ընթացքում կայացած հանդիպումների ընթացքում ՊԵԿ ներկայացուցիչները ծանոթացել են ԱՀԿ «ՀԴՀ2» և ԱՀԿ «ՀՀՏ» ծրագրային համակարգերի և ապրանքների հետագծելիության մեխանիզմին: Բացի այդ հնարավորություն է ընձեռվել ծանոթանալ նաև <<Հարկատուների անձնական տարածք>> էլեկտրոնային համակարգի գործունեությանը, ինչպես նաև էլեկտրոնային եղանակով ծառայությունների հարկման վարչարարությանը և մասնագիտական հարկով հարկման վարչարարությանը, որոնց շրջանակներում ընդգծվել է փոխադարձ փորձի փոխանակման անհրաժեշտությունը: Ընդհանուր առմամբ հայկական կողմը համակողմանի ծանոթացել է Ռուսաստանում հարկային վարչարարության թվայնացման մեխանիզմին:

Հանդիպում է տեղի ունեցել Դուբնա քաղաքի տվյալների մշակման կենտրոնի ղեկավարության հետ, որի ընթացքում տվյալների մշակման կենտրոնում իրականացվել է ճանաչողական շրջայց:

**8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝**

Նախնական պայմանավորվածություն է ձեռք բերվել Ռուսաստանի դաշնային հարկային ծառայության ղեկավար Միխայիլ Միշուստինի՝ ս.թ. նոյեմբեր ամսին ՀՀ այցելության հետ կապված:

Բացի վերոնշյալը, երկու կողմերի միջև ձեռք է բերվել ուղեկցող փաստաթղթերի փոխճանաչման և ներդրման պայմանավորվածություն:

Փորձի փոխանակման համատեքստում առանձնացվել են մի քանի կարևոր ուղղություններ՝ մասնավորապես, Ռուսաստանի հարկային ծառայության ձեռքբերումներից, ընդգծվելով՝ մեխանիկական ուսուցման և արհեստական բանականության օգտագործումը հսկիչ գրանցումներից տեղեկատվություն ստանալու հարցում, ինչպես նաև էլեկտրոնային եղանակով ծառայություններ մատուցող օտարերկրյա կազմակերպությունների սպասարկման ուղղությամբ փորձի փոխանակումը, ինչը հարմարավետ է և արդյունավետ, քանի որ թույլ է տալիս օտարերկրյա ընկերություններին հայտարարագրեր ներկայացնել և հարկեր վճարել Ռուսաստանի բյուջե, առանց Ռուսաստանի Դաշնությունում ֆիզիկապես ներկա լինելու:

**9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝**

Պայմանավորվածություն է ձեռք բերվել Ռուսաստանի հարկային ծառայության ներկայացուցիչների՝ ս.թ. օգոստոս ամսին Հայաստան այցելության շուրջ, որի շրջանակներում կներկայացվի էլեկտրոնային առևտրի հարկման ՌԴ փորձը, ինչպես նաև կքննարկվի դրա որոշ ուղղությունների՝ ՀՀ-ում տեղայնացնելու հնարավորությունները և հեռանկարները:

**10. Ստորագրությունը, ամսաթիվը**

**16.07.2019թ.**